ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1952 Общественные науки

ԵԴՈՒԱՐԴԱԿԱՆ ԱԵՍՊՈՒՄԻԼԻԿԱՆԵՐՈՒՄ

«ԻԲԵՐՈ-ԿՈՎԿԱՍՅԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» Հ. III, 1952, ԷՋ X + 536 ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Վերջերս լույս տեսավ Վրացական ՍՍՌ ԳԱ-ի Լեզվաբանության ինստիտուտի «Իբերո-կովկասյան լեզվաբանություն» աշխատությունների ժողովածուի երրորդ ստվարածավալ հատորը՝ Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի իսկական անդամ Արնոլդ Չիքոբավայի խմբագրությամբ։

Ի. Վ. Ստալինի լեզվաբանական հանճարեղ, դարագլուխ կազմող աշխատությունը «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հիմք դրեց սովետական լեզվաբանության հզոր վերելքին և հետագա անարգել զարգացմանը։ Սովետական լեզվաբանները, առաջնորդվելով ընկեր Ստալինի հանճարեղ աշխատության դրույթներով, հսկայական աշխատանք են կատարում սովետական լեզվաբանության առաջ դրված խնդիրները լուծելու ուղղությամբ։

Ահա այս հույժ կարևոր խնդիրն է նպատակ դրել Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի Լեզվաբանության ինստիտուտի «Իբերո-կովկասյան լեզվաբանության» տվյալ, երրորդ հատորը։ Այս հատորն ամբողջապես նվիրված է ընդհանուր լեզվաբանության հարցերին, որոնք քննության են առնված այստեղ Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունների լույսի տակ։

Ժողովածուի առաջին երկու հոդվածներն են պրոֆեսոր Ֆեթո Լոմթաթիձեի «Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատությունը և նրա նշանակությունը սովետական լեզվաբանության համար» և պրոֆ. Արն. Չիքոբավայի «Սովետական լեզվաբանության խնդիրները և հիմնական պրոբլեմները» հոդվածները։ Շատ հետաքրքրական է պրոֆ. Արն. Չիքոբավայի հոդվածը, ուր հեղինակը իրեն հատուկ բազմակողմանիությամբ, փաստերի լայն օգտագործումով ու հիմնավորումով տալիս է սովետական լեզվաբանության առաջնահերթ խնդիրները, նրա հիմնական պրոբլեմները՝ ելնելով ստալինյան լեզվաբանության հիմնարար դրույթներից։ Տալով լեզուների ծագումաբանական ուսումնասիրության կամ պատմա-համեմատական մեթոդի առավելությունները՝ ձեվաբանական դասակարգման կամ մառյան իդեալիստական քառատարր վերլուծության, լեզուների ստադիալ զարգացման հակագիտական տեսության համեմատությամբ՝ հեղինակը միաժամանակ ընդգծում է պատմա-համեմատական մեթոդի լուրջ թերությունները. «Սա զարմանալի էլ չէ,— գրում է Արն. Չիքոբավան,— գոյություն ունեն պատմա-համեմատական քերականություններ, գոյություն ունեն տարբեր լեզվաընտանիքների ու լեզվախմբերի պատմա-համեմատական բառարաններ, բայց գոյություն չունի այն մեթոդի թեորիան, որի համաձայն այս բոլորը մշակվում էր ու մշակվում է»։

Հեղինակը պատմա-համեմատական մեթոդի հիմնական թերությունների կողքին տալով միաժամանակ նրա առավելությունները, այն, որ այդ մեթոդը լեզվաբանին մղում է դեպի աշխատանք, դեպի լեզուների ուսումնասիրություն, գրում է. «Լեզվաբանը, որ չի տիրապետում կոնկրետ լեզվական նյութին, որ չի ուսումնասիրում ոչ մի կոնկրետ լեզու, չի կարող դառնալ լեզվի իսկական տեսաբան։ Նման «անլեզու» լեզվաբաններ աճեցին լեզվի «նոր ուսմունքի» տիրապետության ժամանակ։ Նման «անլեզու» լեզվաբաններ, միայն ընդհանուր լեզվաբանության «մասնագետներ» սովետական լեզվաբանությանը օգուտ չեն բերել և չեն էլ կարող բերել» (էջ 9)։

Մառյան իդեալիստական քառատարր վերլուծությունը զուրկ լինելով պատմական ամեն տեսակի հիմքից՝ ոչ մի օգուտ չի բերել սովետական լեզվաբանությանը։ Սրա հետ միասին հեղինակն իր այս հոդվածում քննադատության է ենթարկում նաև թյուրքական

այսպես կոչված «գյունեշ գիլ» («արևի լեզու») տեսությունը։ Եթե Ն. Մառի բառատարը վերլուծությունը աշխարհի բոլոր լեզուները հանում էր տխրահռչակ չորս էլեմենտներից, ապա թյուրքական «գյունեշ գիլ» մաքուր իդեալիստական ու ռասսայական-շովինիստական, գիտության հետ ոչ մի կապ չունեցող «տեսության» համաձայն բոլոր լեզուները ծագում են մի էլեմենտից. պարզ ասած՝ թյուրքական լեզվի ալ («սպիտակ») բառից (!), այն առումով՝ թյուրքական լեզվից (!), թյուրքական «լեզվաբանները» իրենց «տեսությամբ» մառյան իդեալիստական ու հակապատմական քառատարը վերլուծությունից էլ հեռու են գնում։

Սովետական լեզվաբանների հզոր կոլեկտիվը,—ավարտում է իր հոդվածը հեղինակը,—մարքսիզմի սկզբունքների, լեզվի մասին ստալինյան հանճարեղ ուսմունքի վրա հիմնվելով, Սովետական Միության բազմաթիվ լեզուները խորը ուսումնասիրելով, ընդհանուր լեզվաբանության ետաձգությունը հաղթահարելով, լեզվի էության և ծագման չլուծված հարցերը ըստ արժանվույն լուծելով, լեզվի և մտածողության փոխհարաբերության հարցը խորապես ուսումնասիրելով, նկարագրական քերականության սիստեմ կառուցելով՝ կարող է ըստ արժանվույն լուծել այն մեծ խնդիրը, որ դրել է ընկեր Ստալինը լեզվաբանների առաջ, այն է՝ ներդրել մարքսիզմը լեզվաբանության մեջ, ամենաառաջավոր հասարակական գիտության հիմքի վրա ստեղծել ամենաառաջավոր լեզվաբանությունը։

Ժողովածուի հաջորդ երեք հոդվածները—պրոֆ. Ֆեթո Լոմթաթիձեի «Լեզվի զարգացման օրինաչափության հարցի մասին» և ավագ գիտական աշխատողներ՝ Էլիկբար Լոմթաձեի «Լեզվի զարգացման բնույթի մասին» և Շոթա Գափրինդաշվիլու «Լեզվի զարգացման բնույթի մասին»—վերաբերում են լեզվի զարգացման առավել բարդ ու նվազ չափով ուսումնասիրված՝ լեզվի զարգացման օրինաչափության և նրա զարգացման բնույթի հարցերին։

Լեզվի զարգացման ներքին օրենքներն ու օրինաչափությունները տարբեր լեզուներում և տարբեր լեզուների զարգացման տարբեր շրջաններում ու փուլերում գործում են տարբեր չափերով ու ձևերով։ Քերականության էության ստալինյան սահմանման հետ կապված լեզվի քերականական կառուցվածքի զարգացմանը հատուկ է այն ընդհանուր տենդենցը, որի համաձայն համեմատաբար նվազ աբստրակտ կատեգորիաներից անցում է կատարվում դեպի առավել աբստրակտ կատեգորիաները։ Սա է լեզվի զարգացման հիմնական տենդենցներից մեկը, որը նկատելի է ինչպես բառապաշարի, այնպես էլ քերականական կառուցվածքի ոլորտում։ Այս տեսակետից էլ չի կարելի մի մակարդակի վրա դնել, մի կողմից, պրիմիտիվ կամ չզարգացած ժողովուրդների լեզուների համար բնորոշ կոնկրետ մտածողությունից ելնող անունների բազմազանությունը և, մյուս կողմից, զարգացած ժողովուրդների լեզուներին հատուկ՝ գյուղատնտեսության, տեխնիկայի, գիտության և արդյունաբերության այս կամ այն բնագավառի մասնագիտացմամբ և զարգացմամբ առաջացած բառային կազմի բազմազանությունը։ Որքան հարուստ ու բազմազան է բառային կազմը, այնքան ավելի հարուստ ու զարգացած է լեզուն։ Իսկ քերականությունը մարդկային մտածողության երկարատև, աբստրահվող աշխատանքի արդյունքն է, մտածողության վիթխարի հաջողությունների ցուցանիշը։ Ուստի և լեզվի զարգացման հարցի համար խիստ կարևոր է, թե ինչն է փոխվում լեզվի մեջ, ինչպես է փոխվում հասարակության զարգացման հետ կապված, կամ ինչպիսին է լեզվի զարգացման ներքին օրենքների և հասարակության զարգացման փոխհարաբերությունը։ Այս կապակցության մեջ պետք է քննել լեզվի հարցերը, քանի որ հասարակությունից դուրս լեզու չկա, և հասարակությունն է այդ լեզվի ստեղծողն ու կրողը, նրա զարգացնողն ու կատարելագործողը։

Շատ կարևոր է լեզվի ու մտածողության փոխհարաբերության հարցը, կարևոր է պարզել, թե ինչպես է կատարվում մտածողության դրսևորումը լեզվաիրողություններով։ Այս հարցը առանձնապես բարդ և չուսումնասիրված հարց է, որի լուծումը պահանջում է լեզվաբանների, հոգեբանների, ֆիզիոլոգների և փիլիսոփաների համագործակցությունը։ Դիշյալ հարցի ճիշտ լուծումը կսահմանի լեզվի կատեգորիաների՝ ձևաբանական, շարահյուսական, իմաստաբանական կատեգորիաների հարցի ճիշտ լուծումը՝ հիմնվելով լեզվի և մտածողության միասնության ստալինյան ուսմունքի վրա։ Այս տեսակետից հետաքրքրական է Դ. Ուզնաձեի անվան Հոգեբանության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից Դարեջան Ռամիշվիլու հոդվածը՝ «Մտածողության և լեզվի փոխհարաբերության հարցի մասին իդեալիստական և սովետական հոգեբանության մեջ», ուր

հեղինակը տալիս է արտասահմանյան իդեալիստական հոդերանության հիմնական հոսանքների սկզբունքային քննադատությունը և նրանց հակադրում է սովետական հոդերանության ձեռք բերած որոշակի նվաճումները։

Համաժողովրդական լեզվի և տերիտորիալ բարբառների հարցին է նվիրված Իվանե Գիգինեիշվիլու հոդվածը՝ «Ի. Վ. Ստալինի ուսմունքը համաժողովրդական լեզվի և բարբառների մասին և միասնական վրաց գրական լեզվի հարցերը», ուր հեղինակը վրաց լեզվի հարուստ նյութի հիման վրա լայն առումով քննության է առնում միասնական վրաց գրական լեզվի մի շարք կարևորագույն հարցերը՝ լեզվի ստալինյան ուսմունքի լույսի տակ։

Ծագումաբանական դասակարգման ակտուալ հարցերի վերլուծությանն է նվիրված Թինաթին Շարաձենիձեի «Լեզուների ծագումաբանական դասակարգում» բավական ընդարձակ հոդվածը։ Սա հեղինակի թեկնածուական դիսերտացիայի մի ստվար մասն է, ուր նա տվել է ծագումաբանական դասակարգման սկզբունքները, նրա պատմությունը, քննության է առել լեզուների բաժանման ու ճյուղավորման, խառնման ու ազդակցման հարցերը, հիմնական գծերով քննել է, մի կողմից, ծագումաբանական դասակարգման մի քանի հարցեր բուրժուական լեզվաբանության մեջ և, մյուս կողմից, լեզուների ծագումաբանական դասակարգման հարցերը Ի. Վ. Ստալինի լեզվաբանական ուսմունքի մեջ, և այլն։

Ն. Մառի, այսպես կոչված, լեզվի «նոր ուսմունքի» ստադիալ դասակարգման, հակապատմական տեսության և արտասահմանյան իդեալիստական հոսանքների քննադատությունը տրված է չորս հոդվածներում։ Դրանք հետևյալ հոդվածներն են՝ պրոֆ. Արն. Զիքորավայի «Պատմականության հարցը լեզվաբանության մեջ», Գ. Ռոգավայի «Աբխազերեն և հադիզերեն լեզուների պատմության վուլգար-մատերիալիստական հասկացման մի քանի նմուշի մասին Ի. Վ. Ստալինի լեզվաբանական ուսմունքի լույսի տակ» և Թինաթին Շարաձենիձեի «Լեզուների ստադիալ դասակարգումը»։

Ժողովածուն ընդհանուր լեզվաբանության մի շարք կարևորագույն հարցերին նվիրված իր այս բազմազան հոդվածներով, որոնք գրված են Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունների լույսի տակ և փաստական հարուստ նյութի հիման վրա, գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում։

Ա. ՄՈՒՐՎԱԼՅԱՆ